

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ



շոնք տարօրինապես անուշ է  
Արարատյան դաշտին մեջ:  
Տաք և միօրինակ կլիմայի  
վարժ հազրենադարձ եղիպ-  
տահայեր, որոնք կանխակալ կար-  
ծիքով և նախապաշարումով կարսա-  
փեին, թե պիտի սրսիան այս աշնան օրե-  
րուն... սաստիկ ցուրտեն, հաճելի զարմա-  
ցումով կվայելեն արևաշող օրերը և կապու-  
տակ երկինքը Արարատյան դաշտի աշու-  
նին: Մասիսները հուտակ գծերով կշողան  
հորդիոնեն վաղ առավոտեն մինչև մայրա-  
մուտ, քիչ անգամ եղծանվելով մշուշի ու ամ-  
պի կուտակումեն:

Հայրենադարձներն ընդերկար կդիտեն  
մեր հարազատ և մայրական Արարատը...:  
Անոնց սիրտերը կուրախանան, բայց կը-  
տըրտմին ու կտամկանան նաև՝ անախորժ  
հուշով մը և մտածումով մը...

Արարատը մին է այն անդիմադրելի մագ-  
նիսներեն, որոնք Մայր Երկիր կդարձնեն  
արտասահմանյան հայերը:

Մյուս գերազոր մագնիսներեն են առա-  
ջինը՝ հայ պետականությունը, որը գարերու  
ստրկություննեն հետո վերապարզելուած է  
մեզի շնորհիվ Հոկտեմբերյան Մեծ Ռևոլու-  
ցիայի և որով գոյությամբը պայմանավոր-  
ված հրաշալի երևույթներու ականատես կըլ-  
լանք ամեն քայլափոխի, և երկրորդը՝ էշ-  
միածինը, Հայ հավատքի ու կուտուրայի  
վաղեմի կենարնը, իր ներկայիս փառահեղ  
գահակալով:

Պատմական ճանապարհով մը, որ սովե-  
տական արևի տակ նոր կյանքի մը եռուզեռը  
կապրի հիմա, էշմիածին կերթանք այսօր,

Վեհափառ Կաթողիկոսին այցելություն տա-  
լու

Իմ մասնավոր խնդրանքիս վրա, զիս  
անձամբ կառաջնորդի ՀՍՍՌ Մինիստրնե-  
րի Սովետին կից Հայ եկեղեցու գործերի  
Խորհուրդի նախագահ ընկ. Սուրեն Հովհան-  
նիսյանը, որուն ծանոթանալու հաճույքն ու-  
նեցած էի շուրջ երկու տարի առաջ, էշմիած-  
նա մեջ կայացած Ազգային-Եկեղեցական  
ժողովին:

Սովետահայ տիպար քաղաքացի է ան,  
որ գիտե այնքան բարությամբ և բարյացա-  
կամությամբ շրջապատել նորեկ քաղաքա-  
ցիները, այսինքն արտասահմանեն հայրե-  
նադարձ հայերը: Քիչ անգամ պատահած  
եմ արտասահմանի մեջ նույն որակով  
մարդկանց, որոնք այնքան շեշտվածորեն  
տրամադրված ըլլան օգնելու իրենց նման-  
ներուն, և որոնք ցույց տված ըլլան այդ  
ուղղությամբ այնքան դրական փաստեր  
Կոմունիստական պարտիային և սովետա-  
կան պետության կողմե պատրաստված այս-  
պիսի միլիոնավոր մարդկանց շնորհիվ էր  
անտարակույս, որ սովետական երկիրը  
դիմագրեց և հուակ ուրեմն հաղթեց նացի-  
ֆաշիստ գաղազած վոհմակներուն, արձա-  
նագրելով համաշխարհային պատմության  
մեծագույն հաղթանակը:

...Ամբողջ օրը, գրեթե ամառային տա-  
քուկ արեգակ մը կար: Հիմա, իրիկնադեմին  
թեթևորեն կանձռեն և օդը գաղց է, մեղմ  
ցուրտի մը հազիկ գգալի շեշտով ակաղձուն:  
Ըստ երևույթին, հետզհետե պիտի ցրտե ճա-  
նապարհին, իսկ ես անխոհեմաբար վերար-  
կու շեմ վերցուցած ինձ հետ: Բայց հակա-  
ռակ տարածամող օրերուն և պահ մը սաս-  
տըկացող անձրևին, օդը կշարունակե մնալ

գաղց, հաղիկ զգալի մեղմ ցուրտով մը: Զը-  
մայի է Արարատյան դաշտի աշունը:

Ուշ հոկտեմբերի այս երեկոյան, մինչ  
երևանի լուսերը հետզհետե կսկսին շողալ.  
կախարդական գեղեցկություն մը ընծայե-  
լով մեր մայրաքաղաքին, կանցնինք նորա-  
կերտ, շեղակառուց Հաղթանակի կամուր-  
ցեն և կուղերինք ունի եղմիածին: Աս-  
ֆալտապատ լայն ճանապարհին երկու եղ-  
րերո բարդիներ կօրորեն իրենդ նուրբ, ջե-  
ղաճկուն սիլուեթը, հայրենական շքեղ ծա-  
ռիր, որոնց կարոտաբաղձությունը կտան-  
ցեր զիս փառավոններու երկրին մեց, որոնց  
օտորում ստվերներու միայն նտեսնես հի-  
մա, և զորս պիտի ուզեի տեսնել դերենիմ,  
արևոն տակ: Ցերեկով պիտի ուզեի տեսնել  
նաև ներգաղթողներու համար նառուցված  
տներու, որոնք նույնպես կեղերեն ճանա-  
պարհո, բարդիներուն զուգահեռ: Տուներեն  
մաս մը անապատ է տակավին, բայց շատ  
մո տոներ արդեն իսկ ամարտված ու բնա-  
կագած են անցյալ տառի Իրանեն և Հու-  
նաստանեն ներգաղթած հայերով: Առաջա-  
ռորված է նման շենքերու իրարու միացնել  
երևանի ու եղմիածինը: Հանրակառը հա-  
ղորդակցության մեջ պիտի զնե զանոնք:

... Հասած ենք դարավոր եցմիածնի դար-  
պասներուն առջև: Ինքնաշարժոր կմտնե ըն-  
դարձակ բակը, շրջան կընե վեհաշուր Մայր  
տաճառին, որ կուրգագծվի կիսամութին մեց,  
հուշածեով այն հանդիսավոր և խանդա-  
վան օրերը, զորս ապրեցանք արնքան նե-  
րուժութեն, շուրջ երկու տարի առաջ, Ազգա-  
յին-Եկեղեցական մեծ համագումարին ա-  
ռիթով:

Կանգ կառնենք Վեհարան առաջնորդող  
արտաքին դռան առջև: Բովանդակ ճամբու  
րնթացքին և այժմ մանավանդ, երբ քանի  
մը բռակ միայն կրաժանեն զիս կաթողիկո-  
սին հանդիպելու պահեն, հարց մը կղզալեց-  
ներ միտքս — ի՞նչպես պիտի գտնեի ա-  
ռողջական միջակը Վեհափառին, որուն  
միաձայնությամբ ընտրությունը երկու տա-  
րի առաջ ամբքան հրժվանք էր պատճառած  
արտասահմանի հայության և որուն ներկա-  
յությունը լուսավորչի գահին վրա այնքան  
բերկրառիթ է ամենուա համար: Արդեն ծե-  
րունազարդ, իր ընտրության օրերուն արդեն  
յոթանասուն և ութամյա Գևորգ Զ. ի՞նչպես  
կըրե, հիմա, իր ութսուն տարիները: Արդ-  
յո՞ք կքած է կաղնին տարիներու ծանրու-  
թյան տակ, արդյոք...

Ո՞վ հրաշք...

Անցած երկու տարիները տասը-տասն և  
հինգ տարիով երիտասարդացուցած են  
Դևորգ Կաթողիկոսը:

Արդարեւ, Վեհարանի մեծ գրանեղանին  
ետին ոտքի կանգնած է պարիւ և վեհ կեր-  
պարանք մը, Եղմիածնա ճանապարհին  
կանգնագեղ բարդիներուն պես ուղիղ հասա-  
կով: Երկու տարի առաջ մեր տեսած, մեր  
ընտրած Հայուապետն է, ամհամեմատ ավելի  
առողջ, ավելի կայտառ, ամենի թարմ  
ու երիտասարդ, քան այն օրերուն...

Չեմ կոնար ուրախությունս և շնորհակո-  
րություններս հնայտնել Կաթողիկոսին՝ իր  
փարթամացած առողջության և տարիի ու-  
րացող արտաքինին համար...

Հայրապետ կրազմի իր բազկաթուին  
վրա և կհրավիրե մեզ ևս նստելու

— Ճիշտ է, տղաս, առողջությունս շատ  
ամելի րավ է, քան երկու տարի առաջ  
Պետք է ըստեմ, թե ես, թե զոտապատս հոգ  
կտանինք առողջությանս: Քանի մը ամիս  
առաջ եղա Կիւլովողսե, Հյուսիսային Կոլ-  
կասի հայուն զերմուկներու, ին, որ մեծա-  
աես նպաստեց առողջությանս: Ունիմ Եց-  
միածնա համար ծրագիրներու: Կիւափարիմ  
Սփուռքի հայությունը տեսնել մերախրմ-  
րված Մայր Հայրենիքի մեջ: Այս երկու  
առաջնառներով կյանքի աետք ունիմ: Եթե  
Աստուած հինգ տարվա կյանք ևս շնորհե  
ինձ, շնորհակալ կըլլամ շատս...

— Հինգ տարին ինչ է որ, Վեհափառու  
Շատ ամելի երկար կյանք կոմինաք:

— Չեմ մերժեր — կրսե Հայրապետը  
Ժպտուն: Կյանքը լավ բան է, եթե գիտենանք  
օգտակարապես վարել ու տնտեսել զայն:

Կաթողիկոսը իր բնդարձակ գրանեղանին  
վրա, ձեռքի տակ ունի արտասահմանան  
բազմաթիվ թերթեր և այլ հոպատարակու-  
թյուններ: Ծնորհիվ ատոնց, ինչպես նաև  
արտասահմանյան թեմերե եկած նամակնե-  
րու և տեղեկագիրներու, հիանալիորեն ի-  
րազեկ է Սփուռքի հայ կյանքի բուրք ան-  
ցուղարձերուն, ինչպես ի հայտ պիտի գար  
ավելի քան երկու ժամ տևած մեր հանդի-  
պումին բովանդակ տեղողությանը:

Կարողնե որպիսությունը եղիպտահայոց  
և անոնց թեմական Առաջնորդ Մամբրե Արք-  
ափիսկոպոսի: Հարցումներ կրնե, որոնք  
կձգուին յուսաբանել այդ թեմին հատուկ  
զանազան երևություններ:

Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանը, կը-  
սենք, Զեր միջոցավ շնորհակալություն կը-  
հայտն Պետությանը, որ թուլատիրեց և Հը-  
նարավոր դարձրեց Հայրենադարձը առ Հա-  
սարակ և եղիպտահայության հայրենադար-

ձը ի մասնավորի, Ան ճշմարտապես հայրենասեր և էջմիածնական եպիսկոպոս, սըրտեռանդն կաշխատի հայրենաղարձի գործին հաջողությանը համար: Մեր ներգաղթի Կենորոնական Կոմիտեին կնախազանհրապարիվ կամ կերպով; Իր ամենաաջերմ փափազն է գալ Հայաստան և ծառայել կամ էջմիածնամբ մեջ՝ որպես լուսարարապետ:

և կամ Սեանա մեջ՝ որպես վանահայր Այսպիս ալ հայտարարեց հայրենաղարձի կապակցությամբ «Արև» թերթին իր տված էնթեռվիումն մեջ: Սպասելով որ իր Հայրապետին կարգադրությամբ օր մը ինքն ալ կարողանա դալ Հայրենիք, կղզիկ իր կրտսեր եղբայրը՝ կոն Սիրոնյանը, որ պիտի դա այս տարին թ կարավանով:

— Ուրախ եմ ու հպարտ Մամրեր Սրբազնի հայրենասիրական եռանդուն գործունեության համար: Մեծապես ուրախ պիտի ըլլայի հոս էջմիածնա մեջ կողքիս ունենալով զինքը: Շատ օգտակար կրնա ըլլալ մեղի, բայց առայժմ լավ է, որ իր պաշտոնին վրա մնա նորպատոսի մեջ, որ զինքը փոխարինելը շատ է դժվար: Միշտ ի մտի ունեցած եմ զինքը իրը ինձի մերձ գործակից վայելելը այստեղ: Տիսնենք պատաշյին:

Վեհափառը կհյուրասիրե զմեղ սուրբով, հայրենական համեղ մրգիրով և շաքարթղիններով:

Կշարունակենք մեր զրուցը Վեհափառին հետ, փոխե ի փոխարտասահմանին և Մայր Երկրեն վերցնելով մեր նյութերը: Պատկանելի խոսակցիս մտքի և շարժումներու աշխուցը հարածուն հիացմոնքով կլեցնե զիս:

Ոգերորդիամբ կխոսի Դպրելանքին մասին, որ արդին 60 սաներով բարօր և հետըզ-հետե լավ կազմակերպվող օչախ մըն է կրոնական կրթության: Առաջին երեք դասարանները լրիվ են այս տարի: Հառաջիկա դպրոցական տարեցրշանին կկազմակերպվի բարձրագույն կրթական բաժին և կունենա Ա լսարանը: Հայրապետին փափազն է հառաջիկա տարի էջմիածնի հրավիրել Դերենիկ եպիսկոպոսը՝ որպես ուսուցիչ:

Գարեգին կաթողիկոսի հետ թղթակցության մեջ է այս մասին: Ընդհանրական

Հայրապետը տարված է դպրեվանքին կըրթական-բարոյական բարձրությունը ապահովելու և ատոր համար անհրաժեշտ նյութական բազա ստեղծելու մտասկեռությունը: Այս մասին ակնկալ է Սփյուռքի հայության լայն աջակցությանը: Իր մեկ ուրիշ մտասկեռություն է Մայր տաճարին վերանուած մեջ՝ որպես լուսարարապետ:



Վեհափառ Հայրապետը  
Վեհարանի պարունակում՝ զբոսանքի ժամին

րոգումը, որուն ամբողջ ծախսը հոգալու հոժարած է ինքնակամ՝ արտասահմանի հայրառատներին մեկը:

Կմնա դպրեվանքին տնտեսական ապահովության պարագան: Արտասահմանի մեր ունեորները պետք է օգնեն Հայրապետին այս մարզին մեջ Մեղի ծանոթ է թի հայրապետական կոնդակով մը հարցը քանի մը ամիսե ի վեր կգտնվի արտասահմանյան թեմական ժողովներու օրակարգին վրա: Կլուծվեր ավելի շուտով, եթե արտասահմանի թի երկրին իսկ համար ավելի

առաջավորություն ներկայացնող հայրենադարձի գործերը կլանած ըրլային ուշադրությունները և միջոցներու Այս հարցը, եզմիածնա Հոգեստը ձեմարանին տնտեսական ապահովության հարցը, պետք է լուծեն թեմական ժողովներեւ ավելի՝ անհատ հարուստներ։

Հայրապետը շատ իրատես մարդ է, բայց ատիկա արգելք մը չէ շատ լավատես ըւլալուն առ հասարակ իր բոլոր բաղձաններուն իրագործման կապակցությամբ։ Շատ լավատես է մեր Դատին արդար լուծումին մասին, այն նվիրական դատին, որուն պաշտպանությանը համար այնքան հոյակապ վավերաթուղթ մը խմբագրած էր և հղած մեծ տերությանց արտարին գործոց նախարարներուն, շուրջ մեկ տարի առաջ և՝ որ այնքան խոր և ծավալուն արձագանք ունեցավ արտասահմանի մեջ։

Ամենայն Հայոց Հայրապետը շատ ոգերսված է հայրենադարձով, զոր կնկատե պատմական անհրաժեշտություն մը։ Ծիշտ է, որ ծանր մոմենտի տեղի կունենա, պատերազմեն անմիջապես հետո և ծանր զոհողություններ կապրտադրե, բայց ամեն զոհողություն կտարմի և պետք է տարվի հոփարությամբ, վասնդի հայությամբ ազգահավաքին շահ մեծ երկույթի մը առօկ ենք։ Հայության պետք է թափով հարազ տարվի այս աննախընթաց շարժումն որ մկան է երկու տարին ի վեր և կշարունակվի։

Ամենայն Հայոց Հայրապետը երկար կրխոսի Հայրենադարձի և Հայկական Դատին մասին, ընթնշմարել տալով շքեղ և սրտագրուակ հեռապատկերներ անոնց կապակցությամբ։ Այս սրտատես, արծվահայաց նահապետին վստահելի առաջնորդությամբ ահա կմխրճմինք ապագայի լույսերուն մեջ, ուր Սովետական Հայաստանը մեծացած ու շատ և շատ ավելի բազմամարդ դարձած, հզոր և բարօր պետություն մը է սովետական ժողովուրիմերու մեծ ընտանիքին մեջ։

Ոչ ինք կտարակուսի ամենադուրս չափով և ոչ ալ մենք՝ հաջողությանը մասին Հայրենադարձի մեծ ու պատմական շարժման և Հայկական սրբազն Դատին իրականացմանը մասին իր ընդնշմարել տված հեռանկարներուն, քանի որ մեր փոքրիկ, այլ արի և հառաջդիմական Հայաստանը մաս կկազմե Սովետական գերհզոր Միության և քանի որ այդ Միությունը կվայելե գերազանց առաջնորդությունը համձարել Մտալինի։

Ամեն դժվարություն պիտի լուծվի անվըրեպ և անվըրեպ պիտի հասնենք մեր նըպատակներուն։

Ընկեր Սուրեն Հովհաննիսյանն կվերադառնա մեզ մոտ հարակից սրահն մը, ուր խորհրդակցության մեջ է եղած դպրեվանքին վերաբերյալ հարցերու շուրջ։ Ո՞րքան էր տեսած մեր առանձնակի խոսակցությունը Հայոց Հայրապետին հետ։ Ավելի քան երկու ժամ։ Մեր խոսակցությունը պահ մը կդառնա խմբական և հրաժեշտ կառնենք Հայրապետեն, շուտով ցերեկով գալու և ճեմարանը այցելելու խոստումով։

Կվերադառնանք բավագույն տպավորություններով և բարձր տրամադրությամբ։ Շքեղ և սփոփարար է Հայոց ներկան և շատ ավելի շքեղափայլ և երջանկաբեր Հայոց ապագան։

Վաղնջական Վաղարշապատեն կվերադառնանք, և կուրանք դեպի մեր նոր և արևաշող օրերու սուտանը՝ Երևան... Միտքս լիքն է հազար խոհերով և մտումներով, ու սիրոս հազար զգացմունքներով, վարար ու վճիռ... Հայոց հարազատ Արարատյան դաշտին մեջ շրջող հայրենադարձ հայ եմ ես հիմա։ Այսքան երջանիկ շեմ եղած նորեկիցն... Երևան կմտնինք ուշ գիշերին։ Անձրկը դադրած է և երկինքը պայծառ։

